

ՀՏԴ.378.009

Մանկավարժության տեսություն և պատմություն

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՆՈՐ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՆՐԱ ՍԵՐՏԱՃՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ
Արաատ ԱՎԱՆԵՍՅԱՆ, Լիլիյա ԱՍՐՅԱՆ**

Բանալի բառեր. կրթական համակարգ, բարձր տիպի դպրոցներ, հոգևոր սնմանարիա, միջնակարգ մասնագիտական հաստատություն, ուսումնարան, բարձրագույն դպրոց, ինստիտուտ, համալսարան:

Ключевые слова: образовательная система, школа высшего типа, духовная семинария, среднеспециальное учреждение, училище, высшая школа, институт, университет.

Key words: educational system, high type school, spiritual seminary, special secondary institution, college, high school, institute, university.

А. Аванесян, Л. Асрян

Основные направления формирования и развития новой высшей образовательной системы Нагорного Карабаха и ее включение в образовательную систему Армении

В статье кратко описаны исторические периоды развития образовательной системы Арцаха с 5-ого века до наших дней, отмечены виды и функции образовательных учреждений основанных в этот период в Армении и в Арцахе в ее неотъемлемой части.

В статье обсуждены процесс формирования новой школьной сети в период включения Армении и Арцаха в состав царской России, а также изменения в этой сфере осуществленные в советские годы.

Кратко представлен процесс включения образовательной системы в Арцахе в результате арцахского освободительного движения.

A.Avanesyan, L.Asryan

The Main Directions of Formation and Development of New Higher Education in Nagorno-Karabakh and its Integration with the Education System of Armenia.

The article briefly presents the stages of historical development of educational system in Artsakh from the 5th century up to now as well as the types and functions of currently acting educational institutions that were established in Armenia and in its indivisible part Artsakh during that period.

A special emphasis has been put on the formation of new educational network within the period when Armenia and Artsakh were included into Tsarist Russia, and the changes being realized in this sphere in the Soviet years.

The process of integration of Artsakh educational system into Armenia's one as a result of Artsakh liberation movement is briefly introduced.

Հոդվածում համառոտակի բնութագրվել է Արցախի կրթական համակարգի զարգացման պատմաշրջանները սկսած 5-րդ դարից մինչև մեր օրերը, տրվել տվյալ ժամանակաշրջանում Հայաստանում և նրա անբաժան մաս կազմող Արցախում հիմնադրված և գործող կրթօջիհների տեսակները և նրանց գործառույթները:

Առանձնակի քննարկման է ենթարկվել Հայաստանը և Արցախը ցարական Ռուսաստանի կազմում ընդգրկվելու ժամանակաշրջանում դպրոցական նոր ցանցի ձևավորման գործընթացը և խորհրդային տարիներին այդ ոլորտում իրականացված փոփոխությունները:

Համառոտակի ներկայացվել է արցախյան ազատագրական շարժման հետևանքով Արցախի կրթական համակարգը Հայաստանի կրթական համակարգի մեջ ներառելու և Արցախում հայեցի նոր բարձրագույն կրթահամակարգ ստեղծելու գործընթացը:

Պատմության տարբեր շրջաններում, հայ կրթական համակարգի ձևավորմանն ու զարգացմանը զուգահեռ և ամուր փոխկապակցված, զարգացել է նաև հայ ժողովրդի այս հատվածի՝ Արցախի կրթական համակարգը, որն ամուր հիմք է դարձել հետագայում միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթական համակարգի ձևավորմանն ու զարգացման համար: Թեև մեր ուսումնասիրության նյութն Արցախի բարձրագույն կրթական համակարգի զարգացման ուղղություններն է և փոխակերպումը Հայաստանի կրթական համակարգի հետ, բայց հարկ ենք համարում համառոտակի բնութագրել նաև Արցախի կրթական համակարգի զարգացման պատմաշրջանները, որի ավանդույթ-

ները հիմք են դարձել Լեոնային Ղարաբաղում (խորհրդային շրջանում) հանրակրթական, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթական նոր համակարգի ձևավորման ու զարգացման /20-րդ դարի 30-50-ական և 60-80-ական թվականները/ համար:

Պատմագիտական հավաստի աղբյուրները վկայում են, որ 5-րդ դարի սկզբին լուսավորչական նպատակներով Հայոց Արևելից կողմեր եկավ Մեսրոպ Մաշտոցը իր մի խումբ աշակերտներով և հայագիր դպրոց հիմնեց /405թ./ հենց Հաբանդ գավառի Ամարաս վանքում [3]:

Մովսես Կաղանկատվացու վկայությամբ՝ Մեսրոպ Մաշտոցը Արևելյան Հայաստանի նահանգներում՝ մասնավորապես Արցախում, բացում է ոչ միայն տաքրական, այլև հոգևոր բարձրագույն կրթություն տվող դպրոցներ՝ Հաշու գյուղ-ավանում /Աղվանքի եպիսկոպոսանիստ բնակավայրերից մեկի՝ Պարտավի մոտ/ [3]:

Եթե Հայաստանում բարձր տիպի դպրոցներ են համարվել Վաղարշապատի-Էջմիածնի, Շաղաթի /5-րդ դարից/, Տաթևի /9-րդ դարից/, Սանահինի, Նարեկա վանքի /10-րդ դարից/, Հաղպատի, Անիի /11-րդ դարից/, Գետիկի-Գռչավանքի /12-րդ դարից/, Կիլիկիայում Սիսի, Սև լեռան /11-12-րդ դարերից/ և բազմաթիվ այլ դպրատներ, ուսումնարաններ, վարդապետարաններ, ապա պատմական Արցախում բարձր տիպի դպրոցներ էին համարվում Ամարասի, Դադի վանքի /5-6-րդ դար/, Գանձասարի, Երիցմանկանց վանքի /12-18-րդ դարերում/ և այլ տիպի դպրոցները, հոգևոր ուսումնարանները [4]:

Չնայած օտար բռնակալների անընդմեջ հարձակումներին, արհեստականորեն ստեղծվող խոչընդոտների, Արցախի մշակութային կյանքը մեկուսացված չէր միջնադարյան Հայաստանի հոգևոր կենտրոններից: Արցախի բազմաթիվ սաներ կրթություն էին ստանում Հայաստանի բարձրագույն դպրոցներում՝ Գլաձորի, Տաթևի, Երզնկայի, Կապուսի համալսարաններում, և ուսումնագիտական այդ հաստատությունների առաջավոր փորձն այնուհետև ներդնում երկրամասի կրթօջախներում:

Ռուսաստանին միանալոց հետո ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին երկրի տնտեսական, մշակութային կյանքի ու կրթական նոր համակարգի ձևավորման ու զարգացման համար: Հայաստանում և Արցախում 19-րդ դարում քաղաքական ու տնտեսական կյանքում տեղի ունեցած իրադարձություններն իրենց անմիջական ազդեցությունն ունեցան կրթական նոր համակարգի զարգացման վրա՝ առաջադրելով նոր պահանջներ, նոր խնդիրներ:

XIX դարում Արևելյան Հայաստանում, ինչպես նաև Արցախում հայկական բարձր տիպի դպրոցները թեմական դպրոցներն էին, որոնք հաճախ կոչվում էին դպրանոց կամ հոգևոր սեմինարիա: Թեմական դպրոցները, այդ թվում Շուշիի թեմականը /1838-1920 թթ./, ժամանակին միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների դեր են կատարել, իսկ ավելի բարձր տիպի դպրոցները 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին երկու տասնամյակում եղել են Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը /1874/: 19-րդ դարի երկրորդ կեսին Շուշի քաղաքում գործել են նաև միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ՝ Մարիամյան օրիորդաց դպրոցը /1864-1874/, Շուշիի Հռիփսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցը /1874-1880թթ./, Շուշիի ռեալական ուսումնարանը /1881-1920/, Շուշիի «Մարիամ Ղուկասյան» օրիորդաց միջնակարգ դպրոցը /1915-1920 թթ./: Շուշիի թեմական դպրոցի պատմությանը նվիրված իր գրքում Լեոն նշում է, որ ինչպես թեմական դպրոցը, այնպես էլ Շուշիի ռեալական ուսումնարանը սերտ կապերով կապված էին Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Մոսկվայի Լազարյան ճեմարանի, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի և այլ ուսումնական հաստատությունների հետ: Ծնորհիվ ռեալական ուսումնարանի՝ որպես նոր տիպի միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատության, հայ երիտասարդները, ավարտելով բարձրագույնը, որակավորում էին ստանում Ռուսաստանի և եվրոպական համալսարաններում, հաղորդակից դառնում ժուռ և եվրոպական առաջավոր մշակույթներին, հասարակական, քաղաքական շարժումներին և վերադառնալով հայրենիք՝ անձնվիրաբար նվիրվում ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացման սուրբ և պատվավոր գործին:

20-րդ դարի երկրորդ տասնամյակում Արցախի կրթական գործի նվիրյալներ Լեոն Վարդունին, Առաքել Առաքելյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Խորեն Սամվելյանը /Շուշիում լույս տեսած Փայլակն թերթի աշխատակիցներ/ «Դպրոցական ռեֆորմ» շարունակական հոդվածներում առաջարկում էին

Արցախում բարձրորակ ուսուցչական կադրեր ունենալու համար Շուշի քաղաքում հիմնադրել նոր տիպի ուսումնական հաստատություն, որտեղ կուսումնասիրեն մանկավարժա-հոգեբանական առարկաներ: Այն ժամանակ Արցախի թեմի դպրոցների համար մանկավարժական կադրեր էին պատրաստում Շուշիի թեմական դպրոցը և ռեալական ուսումնարանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1920 թ. Շուշիի ռեալական ուսումնարանի փակումից հետո ռեալական շենքում գործող երկաստիճան հանրակրթական դպրոցը 1921-1922 ուսումնական տարում վերափոխվում է ուսուցչական սեմինարիայի, իսկ 1922-1923 թթ. ուսումնական տարում՝ մանկավարժական ուսումնարանի՝ դառնալով ռեալական ուսումնարանի իրավահաջորդը:

Նշված ժամանակաշրջանի պատմամանկավարժական աղբյուրների և այլ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունում միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթական օջախների կազմակերպումը տեղի է ունեցել յուրօրինակ ձևով, նախ՝ ստեղծվել է բարձրագույն ուսումնական հաստատություն և նոր միայն՝ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն: Այդ ուշագրավ երևույթը բացատրվում է նաև նրանով, որ բարձրագույն ուսումնական հաստատություններում աշխատելու համար կային բարձրորակ դասախոսական կադրեր և՛ տեղում, և՛ «ղրտում»: Խոսքը վերաբերվում է Խորհրդային Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջնեկին՝ Երևանի պետական համալսարանին /1920թ./, որը հետագայում մասնագետներ է պատրաստել ոչ միայն Հայաստանի, այլև Լեռնային Ղարաբաղի հանրակրթական դպրոցների, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների համար: Հավաստի աղբյուրների համաձայն՝ 1920-1930-ական թվականներին Հայաստանում ընդլայնվում էր ինչպես միջնակարգ մասնագիտական, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցը [5]:

Սակայն, ինչպես նշվել է, Լեռնային Ղարաբաղում մանկավարժական կադրերի պատրաստումը սկզբում կատարվում էր հատուկ մանկավարժական թեքում ունեցող երկրորդ աստիճանի դպրոցներում, հետագայում՝ մանկավարժական միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ուսումնարաններում: Նշենք նաև, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում 1922-1930-ական թվականներին կազմակերպվում էին միայն միջնակարգ մասնագիտական կրթօջախներ, որոնք մասնագետներ էին պատրաստում հանրակրթական դպրոցի, ժողովրդավարական տնտեսության, կրթության և առողջապահության ոլորտների համար: Եվ ահա այդ պայմաններում Ղարաբաղում նախապայմաններ են ստեղծվում միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների բազայի վրա կազմակերպելու բարձրագույն դպրոց՝ երկամյա ուսուցչական ինստիտուտ: Հիրավի, հայոց բարձրագույն դպրոցների ձևավորված ավանդույթները հիմք են դարձել նաև Ղարաբաղում բարձրագույն կրթության նորովի կազմակերպման ու զարգացման համար:

Անհերքելի փաստ է, որ այն ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղում տիրող բարդ իրադրությունում բարձրագույն ուսումնական հաստատություն հիմնելը, իրոք, բարդ ու դժվարին, գրեթե անհաղթահարելի հարց էր: Պետք է հրատապ լուծվեին այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին ուսումնական շենքի, ուսանողական հանրակացարանի, դասախոսական կազմի հավաքագրման ու նրանց բնակարաններով ապահովելու, անհրաժեշտ ուսումնական պլանների, ծրագրերի, դասագրքերի ու ձեռնարկների ստեղծման հարցերը:

Եվ այնուհանդերձ, մարզում բուռի հիմնադրելու պահանջը ջերմորեն պաշտպանում էին Հայաստանի և Ղարաբաղի առաջադեմ մտավորականներն ու քաղաքական գործիչները:

Այսպես, Լեռնային Ղարաբաղի մարզուս բաժնի վարիչ Գրիգոր Բաղյանի /Հայրենական պատերազմում արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման/ հաշվետվությունից տեղեկանում ենք, որ մարզի հայկական դպրոցները բարձրագույն կրթություն ունեցող որակյալ ուսուցչական կադրերով ապահովվելու հարցը պարբերաբար քննարկվում էին 1938-1939 ուսումնական տարում մարտ-ապրիլ ամիսներին հրավիրված ԼՂ լուսժողկոմի կոլեգիայի նիստերում: Մարզուսբաժինն անմիջապես ձեռնարկեց այն բոլոր միջոցառումների կենսագործումը, որոնք անհրաժեշտ էին երկամյա ուսուցչական ինստիտուտի բացման համար: Հարկավոր էր նախ մշակել ինստիտուտի կանոնադրությունը, որտեղ հստակորեն նշված լինեին այն սկզբունքները, որոնց հիման վրա կազմակերպվելու և գործելու էր այն:

Այդ նպատակով վերոնշյալ ուսումնական տարվա ապրիլի 26-ին հրավիրված մարզլուսբաժնի կոլեգիայի նիստում քննարկվեց լուսժողկոմ Գրիգոր Բաղյանի, Գրիգոր Ուլուբաբյանի, Սուրեն Հայրապետյանի կողմից կազմած նախագիծը՝ երկամյա մանկավարժական /ուսուցչական/ ինստիտուտի բյուջեն, կառուցվածքը /ֆակուլտետներն ու մասնագիտական խմբերը/, կառավարման մարմինները /ամբիոնները/, գիտակրթական կապերը Հայաստանի բուհերի հետ, գիտական հետազոտությունների ուղղությունները նորաստեղծ բուհում, ուսումնական հաստատության ներքին կյանքին առնչվող այլ հարցեր:

Լուսժողկոմը որոշ փոփոխություններով ընդունում է նախագիծը և հաստատում: Այն քննարկվում է նաև ԼՂ մարզկոմի բյուրոյի նիստում և հավանության արժանանում, իսկ այնուհետև քննարկվում և հաստատվում է Ադրբեյջանի լուսժողկոմի կոլեգիայում, որից հետո Ադրբեյջանի կառավարությունը հունիսի 17-ին որոշում ընդունեց Շուշիի մանկավարժական ուսումնարանի շենքում բացել մանկավարժական ինստիտուտ՝ երկամյա դասընթացով:

Այսպիսով Լեռնային Ղարաբաղում բուհական համակարգի, թեկուզ և երկամյա կրթության տարբերակով, հիմքերը դրվել են 1938-1939 ուսումնական տարում:

Նախապատրաստական որոշակի աշխատանքներից հետո ԼՂ լուսժողկոմի կոլեգիայի նիստում /1938-1939 ուս. տարվա մայիսի 16-ին/ հաստատվեց նաև նորաստեղծ երկամյա ինստիտուտի կանոնադրությունը:

Ըստ կանոնադրության՝ երկամյա մանկավարժական ինստիտուտի բարձրագույն օրգանը նրա խորհուրդն էր, որի մեջ մտնում էին տնօրենը /նախագահ/, դեկանները, ամբիոնի վարիչները, ուսումնական մասի վարիչը, երեք ներկայացուցիչ դասախոսներից, մեկական ներկայացուցիչ /լուսժողկոմատից/, արհմիությունից, հինգ ներկայացուցիչ ուսանողներից [7]:

Ըստ կանոնադրության, երկամյակի խորհրդի իրավասության մեջ մտնում էին հետևյալ խնդիրները՝ բուհի վարչակազմի դեկավարությունը, ֆակուլտետների կողմից առաջադրվող դասախոսների հաստատումը, բյուջեի սահմանումն ու իրացումը, տնօրենի ընտրությունը /երկամյա ինստիտուտի առաջին տնօրենն էր Մոսկվայի համալսարանի շրջանավարտ, մաթեմատիկոս Զավադ Մայիլյանը/: Տարածայնությունների դեպքում քննարկվող հարցի վերջնական լուծումը վերապահվում էր ԼՂ լուսժողկոմին: Ինստիտուտի խորհուրդում ԼՂ լուսժողկոմի ներկայացուցիչն էր Սուրեն Հայրապետյանը /հետագայում՝ 1952-1958թթ., եղել է ԼՂԻՄ մարզլուսբաժնի/:

Հարկ է նշել, որ Լեռնային Ղարաբաղում բարձրագույն դպրոցի ստեղծմամբ երկրամասի հայ մտավորականությունը լայն հնարավորություն էր ստանում աշխատելու Ղարաբաղում և ծառայելու իր ժողովրդի գիտական և մշակութային պահանջներին: Չնայած ինստիտուտն ուներ նաև ադրբեյջանական և ռուսական բաժիններ, այնուհանդերձ հայ երիտասարդության համար բացվեցին մայրենի լեզվով բարձրագույն դպրոցի դռները: Անշուշտ, այդ տարիներին Ղարաբաղի հայ երիտասարդության մեծ մասը սովորում էր Հայաստանի բուհերում: Երկամյա ինստիտուտի հիմնադրումը /չնայած Ադրբեյջանի լուսժողկոմի որոշմամբ էր/ մեծ գոհունակությամբ ընդունեց նաև Հայաստանի առաջավոր մտավորականությունը, որը խորապես գիտակցում և բարձր էր գնահատում հայ ժողովրդի այդ հատվածում հայ մշակույթի այդ կարևորագույն օջախի դերը [8]:

Արևիկային փաստաթղթերից, երկամյակի շրջանավարտների հուշերից տեղեկանում ենք, որ նորաստեղծ ինստիտուտը ուներ երեք՝ պատմալեզվաբանական, ֆիզիկամաթեմատիկական և բնագիտաաշխարհագրական ֆակուլտետներ՝ 250-300 ուսանողներով: Ըստ ֆակուլտետների ստեղծվեցին դեկանատներ, համապատասխան ամբիոններ: Ամբիոնները մեծ դեր խաղացին դասընթացների որակի բարձրացման, մասնագետների համալսման, ուսումնական ծրագրերի ու կիրառման մեթոդների դասավանդման գործում:

Ի պատիվ Հայաստանի և Արցախի /Ղարաբաղի/ հայրենասեր մտավորականության՝ պետք է ուրախությամբ ասել, որ այդ դժնդակ տարիներին /ազերիների միջավայրում/ նրանք անձնվիրաբար կանգնած էին մեր ժողովրդին ծառայելու դիրքերում և անգնահատելի ծառայություն մատուցեցին մեր ժողովրդին ոչ միայն գիտության զարգացման բնագավառում, այլև կրթեցին և դաստիարակեցին մարզի առաջին բարձրագույն ուսումնական հաստատության մի ամբողջ սերունդ և իրենց ուսերի վրա տարան արցախահայ մտավորականության նոր կադրեր պատրաստելու դժվարին, բայց պատվավոր

գործը: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրումը վկայում է, որ երկամյա մանկավարժական ինստիտուտի գործունեության երկրորդ տարում կառուցվածքային որոշակի փոփոխություններ են կատարվում ադրբեջանական բաժնում: Այսպես, Հայրենական պատերազմի նախօրյակին՝ 1940 թվականին, ինստիտուտի ադրբեջանական բաժնի լեզվագրական ֆակուլտետին կից բացվեց հեռակա բաժին՝ 28 ուսանողով: Նույն տարում ինստիտուտի դասախոսների թիվը հասնում էր 40 –ի, որից գիտությունների թեկնածու՝ 1, դոցենտ՝ 2, ավագ դասախոս՝ 22, իսկ մնացածը՝ դասախոս-ասիստենտներ:

Ժամանակակիցների հուշերը վերստին վկայում են, որ թվում էր, թե այլևս անկարելի էր մարզկենտրոնում՝ Ստեփանակերտ քաղաքում, երկամյա մանկավարժական ինստիտուտի գործունեության մեկնարկը: Ադրբեջանի ազգայնամոլ իշխանավորները պատճառաբանում էին, թե Ստեփանակերտում համապատասխան շենքային պայմանների բացակայության պատճառով ինստիտուտը հարմար է բացել Շուշիում՝ մանկավարժական ուսումնարանի շենքում: Ի պատիվ Հայաստանի և Ղարաբաղի հայրենասեր մտավորականության մեծ ջանքերի և հետևողական պահանջների՝ ի վերջո Շուշիի երկամյա մանկավարժական ինստիտուտը 1945-1946 ուս. տարվա սեպտեմբերին տեղափոխվեց Ստեփանակերտ և տեղավորվեց գյուղատնտեսական տեխնիկումի շենքում և վերանվանվեց Ստեփանակերտի երկամյա մանկավարժական /ուսուցչական/ ինստիտուտ [9]:

Շարունակելով նախորդ տարիներում /1939-1946 թթ./ Հայաստանի բուհերում և երկամյակում ստեղծած լավագույն ավանդույթները՝ Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը գործունեության բուռն զարգացման նոր փուլ թևակոխեց: ԼՂՀ պետական արխիվի ֆոնդ 30-ում երկամյակի պատմությանը վերաբերող որոշ փաստաթղթեր վկայում են, որ Ստեփանակերտի երկամյակում տեղի ունեցան լուրջ փոփոխություններ, բացվեցին նոր բաժիններ, ուսումնական լաբորատորիաներ, կաբինետներ: Բուհի գործունեության տարիներին /1946-1953 թթ./ ֆակուլտետները ևս ենթարկվեցին որոշակի փոփոխությունների՝ պայմանավորված մարզի համար անհրաժեշտ մասնագետներ պատրաստելու պահանջով:

Որակական փոփոխություններ կատարվեցին նաև մասնագետների պատրաստման, որակի բարձրացման /մանավանդ որ պատերազմական շրջանում դասավանդում էին բարձր կուրսի ուսանողները/ ուղղությամբ: Աստիճանաբար ընդլայնվեցին ինստիտուտի հնարավորությունները: Փոխադարձ կապ ստեղծվեց Հայաստանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի մանկավարժության, հոգեբանության ամբիոնների հետ: Հայաստանի բուհերի ղեկավարները, բազմամյա փորձ ունեցող գիտնականները ուրախությամբ էին ընդունում Ղարաբաղում նորաստեղծ ինստիտուտի հրավերը: Իհարկե, շատերը կամովին էին գալիս ուսումնակրթական այդ կրթօջախում դասավանդելու և իրենց հարուստ փորձը փոխանցելու սկսնակ դասախոսներին: Նկատի ունենք հատկապես փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Սիմոնյանին, մանկավարժագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Բարսեղյանին, դոցենտ Արամ Բալյանին /հետագայում՝ դոկտոր, պրոֆեսոր/, դոցենտներ՝ Արտաշես Ոսկերչյանին, Աշոտ Տեր-Գասպարյանին, ավագ գիտաշխատող Գեորգի Հովհաննիսյանին և ուրիշներ [8]:

Երկամյա մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը աստիճանաբար համալրվում են մարզում ճանաչված մանկավարժներով, որոնք բարձրագույն որակավորում էին ստացել Երևանի բուհերում, Մոսկվայի համալսարանում, Թիֆլիսի, Բաքվի հայկական բարձրագույն ուսումնական հաստատություններում /նկատի ունենք Բաքվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը/ և այլ բուհերում: Դրանցից են՝ Բոգդան Ջանյանը, Բագրատ Ուլուբաբյանը, Սարգիս Արամյանը, Սուրեն Հայրապետյանը, Միքայել Ասրյանը, Միշա Պետրոսյանը, Արմենակ Ղալայանը, Լևոն Բաղդասարյանը և ուրիշներ: Ի դեպ, նշենք, որ այդ տարիներին անամպ չի եղել այդ ուսումնական հաստատության երկինքը: Ինչպես Արցախյան շարժման ականավոր գործիչ, անվանի պատմաբան Բագրատ Ուլուբաբյանն է գրում. «Անբեկանելի կարգով մարզի առողջապահությունն ու ժողովրդական կրթությունը պետք է մասնագետներ ստանային ուղիղ Բաքվից, և այդ մասնագետներն էլ պետք է լինեին միայն ադրբեջանցիները /ինչպես երկամյակի բոլոր որոշումներն ու հրահանգները տրվում էր Բաքվից/: Մարզի հայկական դպրոցները, միջնակարգ մասնագիտական

ուսումնարանները և նորաստեղծ բուհը՝ Երկամյակը, Երկաթե վարագույրով անջատվեց մայր Հայաստանի դպրոցական-կրթական կյանքից: Ոչ միայն կրթական, ուսումնագիտական օջախները, արցախահայն այնպես բաժանվեց իր ազգային վարչական մշակութային առավել խոշոր միավորումից, որ Հայաստան ուսման գնալը, կամ այնտեղ կատարած սովորական երթևեկելը դիտում էր որպես քաղաքական անհուսալիության դրսևորում»[6]: Ստալինյան ռեպրեսիայի տարիներին երկամյակի դասախոսներ Բողգան Ջանյանը, Արտաշես Ռոսկերյանը, Արտավազդ Ավագյանը և շատ ուրիշներ անարդարացիորեն արտրվեցին Սիբիր:

Սակայն, ափսոսանքով պետք է նշել, որ շատ կարճ տևեց Լեռնային Ղարաբաղի /Արցախի/ մեծ աղմուկով բացված, բայց իրականում կարճատև գիտամանկավարժական գործունեություն ծավալած առաջին ոչ լրիվ՝ երկամյա մանկավարժական /ուսուցչական/ ինստիտուտի գիտակրթական գործունեությունը /1939-1953թթ/: Այն փակվեց, և հայկական բաժինը տեղափոխվեց Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտ:

Այսպիսով, վերոնշյալ փաստերի համադրումից և պատմաքննական վերլուծությունից գալիս ենք այն եզրահանգման, որ, ինչպես նշվեց, Լեռնային Ղարաբաղում առաջին անգամ բուհական գիտակրթական համակարգի հիմքերը դրվել են 1938-1939 ուսումնական տարում, իր ձևավորման և որոշակի զարգացման մակարդակի այն հասել է 1939-1953 թվականներին և մեկուկես տասնամյակ /1953-1969 թթ./ փակվելուց հետո՝ 1969-1988 թվականներին, Լեռնային Ղարաբաղում ձևավորվում է բարձրագույն գիտակրթական նոր համակարգ, որի գործունեության տարիները, անշուշտ, հարթ չեն եղել, հնարավորությունները չափազանց սահմանափակ էին, հայկական բաժինն տրամադրած միջոցները՝ սուղ, էլ չենք խոսում ուսումնական պլաններում, ծրագրերում հայագիտական առարկաների ժամաքանակի սահմանափակման և այլ սովերային երևույթների մասին, որոնք բացասաբար էին անդրադառնում թե՛ դասախոսական կազմի և թե՛ հայկական խմբերի ուսանողության գործունեության վրա:

Ժամանակագրական առումով Լեռնային Ղարաբաղում լիարժեք բարձրագույն կրթության զարգացման երկրորդ փուլը ընդգրկում է 1969-1988 թվականները:

Պատմագիտական մանկավարժական աղբյուրները ժամանակի պարբերական մամուլում լույս տեսած հոդվածները համոզիչ փաստերով վկայում են, որ Ղարաբաղում նոր տիպի բարձրագույն դպրոցը հիմնադրվեց մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ հարաճուն սաստկացան ԼՂ Ինքնավար Մարզի հայ մտավորականության բողոք պահանջները ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությանը՝ կապված Բաքվի իշխանությունների հակահայ քաղաքականության որակավորումների հետ, ինչը, պարզ է, անհետևանք մնալ չէր կարող: Բնականաբար, կենտրոնական իշխանություններն աշխատում էին Ադրբեջանի հանրապետական մարմինների հետ սերտ փոխգործակցության պայմաններում: Միևնույն ժամանակ ազգային հողի վրա ակնհայտ լուրջ վտանգահարույց անախորժություններից խուսափելու համար Կրեմլի հրահանգներով ու հանձնարարականներով որոշ հարցեր, այնուամենայնիվ, այս կամ այն չափով դրական լուծում էին ստանում: Սակայն Մոսկվայից իջած հանձնարարականները, Բաքվի իշխանություններն արդարացի լուծումներում չէին անտեսում, ավելին, դարձյալ առաջնաբեմ էին մղում, այսպես կոչված, «ադրբեջանական ազգային քաղաքականության» հետագնա նպատակներն ու խնդիրները: Ահա այդ միտումով էլ Բաքվի իշխանությունները նպատակամետ քաղաքականություն էին վարում: Երկու տասնամյակ հետո՝ 1969 թվականին, Ադրբեջանի իշխանությունները, փակելով Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը /այն գործում էր 1932 թվականից/, այն տեղափոխեցին Ստեփանակերտ՝ որպես մասնաճյուղ՝ երեք բաժիններով /հայկական, ադրբեջանական, ռուսական/: Բաքվի իշխանությունների հեռահար նպատակն այն էր, որ դրանով ամուր հիմքեր ստեղծեն մարզում ադրբեջաներենի մասսայականացման և ազերի մտավորականության խիտ բանակ ունենալու համար: Այն, որ Ադրբեջանի իշխանությունները նպատակալից քաղաքականություն էին վարում Արցախ-Ղարաբաղի նկատմամբ և ամեն կերպ փորձում ադրբեջանական տարրն ավելացնել այնտեղ, դա հստակ երևում է թեկուզ 1969 թվականի Ստեփանակերտում բացված Բաքվի մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղի օրինակի վրա:

Ադրբեջանի իշխանությունները լավ հասկանում էին, որ մարզկենտրոնում զուտ հայկական բարձրագույն ուսումնական հաստատության ստեղծումը կնպաստի ԼՂՀՄ-ի հայ բնակչության ազգային

ինքնագիտակցության բարձրացմանը, և նման կրթօջախում կձևավորվի հայրենի երկրամասի հոգսերով ապրող մտավորականության նոր ջոկատ, ինչպես նաև ուսանողական մի խավ, որոնք անտարբեր չէին կարող լինել քաղաքական գործընթացների, հատկապես մարզում իրագործվող ազգային քաղաքականության նկատմամբ, ուստի նման վտանգից խուսափելու համար ընտրվեց համապատասխան տարբերակ: Այն է՝ Ստեփանակերտում ստեղծել «ինտերնացիոնալ բնույթի» բարձրագույն ուսումնական հաստատություն:

Ադրբեջանից կախման մեջ պահելու նպատակով բացվող ուսումնական հաստատությունն ինքնուրույն միավոր լինել չէր կարող: Այն պետք է լիներ Ադրբեջանի մանկավարժական ինստիտուտի մասնաճյուղ, ինչպես նշեցինք, երեք բաժիններով՝ հայկական, ադրբեջանական և ռուսական:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը բացման պահին /1969-1970 ուսումնական տարում/ ուներ ընդամենը մեկ մաթեմատիկական ֆակուլտետ՝ «մաթեմատիկա», «ֆիզիկա» մասնագիտություններով: Այն ուներ 150 ուսանող: 1970-1971 ուսումնական տարում կատարվեց ցերեկային ուսուցման անդրանիկ ընդունելությունը հիշյալ երկու մասնագիտությունների գծով: Բաքվից իջեցված պլանի համաձայն հայկական բաժնում ընդունել են 200 ուսանող, իսկ ադրբեջանականում՝ 175, այն դեպքում, երբ մարզի տարածքում ադրբեջաներեն դպրոցների թիվը մոտ տասը անգամ պակաս էր հայկական դպրոցներից, նաև ասենք, որ սկսած 1974 թվականից ռուսական բաժնում ընդունվող ուսանողների թիվը /26-28/ մնում է անփոփոխ: Մինչդեռ Ղարաբաղում տարեցտարի ավելանում էր ռուսալեզու սովորողների թիվը՝ 150-ից 160-ի: Այդ քաղաքականությունը շարունակվեց մինչև 1988 թ. Արցախյան համազգային շարժումը [10]:

Փաստագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1971-1972 ուս. տարում մասնաճյուղի կառուցվածքում որոշ փոփոխություններ կատարվեցին: Կազմակերպվեց երկու՝ պատմաբանասիրական և ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետներ /համատեղ՝ հայկական և ադրբեջանական/ 250-300 ուսանողներով: Ինչպես վկայում է մասնաճյուղի առաջին տնօրեն, պրոֆեսոր Շահեն Աբրահամյանը, 1972-1973 ուս. տարում մասնաճյուղը տվեց իր առաջին 132 շրջանավարտները /պետական քննական հանձնաժողովի նախագահն էր Երևանի պետական համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ, դոցենտ Մելքում Մելքումյանը/, որոնք աշխատանքի անցան մարզի հանրակրթական դպրոցներում, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Պատմագիտական աղբյուրների ուսումնասիրությունը կրկին հաստատում է անհերքելի այն փաստը, որ Բաքվի իշխանություններն իրենց որդեգրած նպատակների իրագործման ճանապարհին հետազայում ձեռնամուխ եղան Ադրբեջանի հայ ազգաբնակչության նկատմամբ յուրօրինակ, «անշահախնդիր, եղբայրական հոգատարության» քարոզարշավի հերթական փուլին՝ այս անգամ այն կապելով օրվա քաղաքական իրադարձության՝ Ադրբեջանի կազմում ԼՂԻՄի կազմավորման 50-ամյա հոբելյանի հետ, 1973 թվի դեկտեմբերին Ադրբեյլուսի կենտրոնի և մինիստրների խորհրդի որոշումներով Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը վերակազմավորվեց ինքնուրույն մանկավարժական ինստիտուտի: Շահեն Աբրահամյանն իր հուշերում պատմում է, որ այդ ժամանակ քննարկման առարկա դարձավ ինստիտուտի անվանակոչումը: Հայաստանի և Ղարաբաղի հայրենասեր գործիչների /Հր. Սիմոնյան, Հր. Շաքարյան, Բագ. Ուլուբաբյան, Ար. Բալյան, Մ. Մելքումյան, Ժան. Անդրյան և ուրիշներ/ կողմից առաջարկվել է /նաև ինստիտուտի հայ գիտնականների՝ Գ. Անտոնյան, Կ. Դավթյան, Ա. Ներսիսյան, Ս. Բաղդասարյան և ուրիշներ/, որ նորաստեղծ բուհը կոչվեն հայագիտության մեծ երախտավոր Լեոյի կամ հայ դասական գրող Մուրացանի անունով: Սակայն երկար ձգձգելուց հետո պատշոնական Բաքուն ինստիտուտը կոչեց Ստեփանակերտի «Սովետական Ադրբեջանի 60 ամյակի անվան մանկավարժական ինստիտուտ» [2]:

Իր հիմնադրման առաջին՝ 1973-1974 ուսումնական տարում ինստիտուտն ուներ երկու ֆակուլտետ՝ ֆիզիկամաթեմատիկական, պատմաբանասիրական, ինը ամբիոն՝ հայոց լեզվի և գրականության, ադրբեջաներեն լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության, ԽՍՀՄ պատմության և տնտեսագիտության, փիլիսոփայության և գիտական կոմունիզմի, մանկավարժության և հոգեբա-

նության, ֆիզիկայի և մաթեմատիկայի, մաթեմատիկական անալիզի, մաքնամաթցության և բուժական պատրաստության, ութ ճյուղային լաբորատորիաներ և մեխանիկական արհեստանոց:

Ստեփանակերտի Սովետական Ադրբեջանի 60 ամյակի անվան մանկավարժական ինստիտուտի /ՍՄԻ-ի/ գլխավոր խնդիրը,- կարդում ենք կրթօջախի առաջին կանոնադրական փաստաթղթերից մեկում,- ԼՂԻՄ-ի հանրակրթական դպրոցների, շրջանային կրթության բաժինների /Մարտակերտի, Մարտունու, Հադրութի, Շուշիի, նաև Շահումյանի/ մշակույթային օջախների և այլ ճյուղերի համար բարձրորակ մանկավարժական կադրեր /մասնագետներ/ պատրաստելն է՝ հաշվի առնելով ժամանակակից մանկավարժական գիտության, տեխնիկայի, մշակույթի հարաճուն պահանջները և զարգացման միտումներն ու հեռանկարները: Այս հիմնախնդիրները, անշուշտ, բուհի գործունեության ուղենիշներն են նաև մեր օրերում:

Ինչպես նշեցինք, հիմնադրման առաջին ուսումնական տարում ՍՄԻ-ում գործում էր երկու ֆակուլտետ՝ ֆիզիկամաթեմատիկական և պատմաբանասիրական՝ հայկական, ադրբեջանական և ռուսական բաժիններում 767 ուսանողով և ինը ամբիոններում՝ 81 դասախոսով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հետագա տարիներին՝ 1974-1988 թվականներին, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը վերակառուցվում, ենթարկվում է բովանդակային փոփոխությունների՝ փոխում է ուղղվածությունը, աստիճանաբար ընդլայնվում է ուսումնագիտական կրթօջախի կառուցվածքը, ստեղծվում են նոր ֆակուլտետներ, որի հիմքի վրա ձևավորվում են նոր ամբիոններ, անշեղորեն աճում է ուսանողների ընդունելության ծավալը: Ավելին, վիճակագրական տվյալների համաձայն՝ ընդունելության տեմպերն ադրբեջանական բաժնում տարեցտարի մի քանի անգամ գերազանցում էին հայկական բաժնի տարեկան միջին աստիճանի տեմպերին: Իհարկե, դա Ադրբեջանի իշխանությունների հեռագնա նպատակալաց քաղաքականությունն է՝ ամուր հիմքեր ստեղծել Ղարաբաղում՝ ադրբեջանական մտավորականության խիտ բանակ ունենալու համար:

Փաստագրական նյութերի, ժամանակակիցների հուշերի և այլ աղբյուրների ուսումնասիրությունները վկայում են այն հավաստի ճշմարտությունը, որ ինստիտուտի գործունեության տարիներին /1974-1988թթ./, այն էլ Ադրբեջանի իշխանությունների ազգահալած քաղաքականության պայմաններում հայկական բաժնի ուսանողների ուսումնառաստիարակչական աշխատանքների, երիտասարդ դասախոսների կազմակերպման, հայցորդների, ասպիրանտների /որոնք ձևակերպված են Հայաստանի բուհերում/ ստեղծագործական աշխատանքների կատարման և ավարտման /ատենախոսություններ/ և պաշտպանության կազմակերպման, ինչպես նաև հայկական բաժնում ուսուցման գործընթացի որակի բարձրացման ուղղությամբ ունեցած ձեռքբերումներում իրենց ծանրակշիռ ներդրումն են ունեցել նաև Հայաստանի բուհերի ռեկտորները, վաստակաշատ գիտնականները, բուհերի մասնագիտական ամբիոնները, կրթական համակարգի առաջատար մասնագետները: Իհարկե հարթ չեն եղել համագործակցության այդ կապերը, բայց փաստը մնում է փաստ, որ Հայաստանի անբաժան հատվածում՝ Ղարաբաղում /Արցախում/, պահպանվել է /այն էլ ինտերնացիոնալ ոլորտում/ ուսումնագիտական այդ կրթօջախի հայաշունչ ոգին:

Արևիկային փաստաթղթերի, ժամանակակիցների հուշերի և այլ աղբյուրների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում մեզ՝ ասելու, որ ՍՄԻ-ն իր կենսագործունեության ողջ ընթացքում /1974-1988 թթ/ տվել է բազում շրջանավարտներ, որոնք արգասաբեր գործունեություն են ծավալել մարզի հանրակրթական դպրոցներում, մարզային, շրջանային կրթության բաժիններում, ԼՂՀ ԿԳ նախարարությունում, պետական կառավարման մարմիններում, հանրապետության նախագահական ապարատում, ԼՂՀ Ազգային ժողովում և այլ ոլորտներում: Ուշագրավ է, որ ինստիտուտի շրջանավարտներից շատերն այսօր աշխատում են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտության և մշակույթի ոլորտներում: Նրանցից շատերը գիտությունների թեկնածուներ, դոցենտներ, դոկտորներ և պրոֆեսորներ են, գիտության և մշակույթի վաստակավոր գործիչներ են, պետական, կառավարման և դատախիզական մարմիններում ու այլ ոլորտներում պատասխանատու աշխատողներ են:

Միակողմանի չինչելու համար հարկ է նշել, որ ՍՄԻ-ի գործունեության տարիներին /1974-1988թթ/ թույլ տրվեցին նաև սխալներ ու վրիպումներ, կառուցվածքային ոչ ճիշտ փոփոխություններ՝ մասնագիտությունների չկշռադատված լուծարումների, ուսանողական համակազմի՝ մի ֆակուլտետից այլ

Ֆակուլտետ տեղափոխությունների, ընդունելության ոչ ճիշտ պլանավորման /այն էլ հայկական բաժնում ազերի իշխանությունների հակահայկական քաղաքականության հետևանքով/ և այլ առումներով: Մեր ուսումնասիրության բնույթից ելնելով՝ հնարավոր չէ անդրադառնալ նմանատիպ հարցերի պատմաքննական վերլուծությանը:

Այսպիսով՝ վերոհիշյալ համառոտակի շարադրածից կարելի է եզրակացնել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, չնայած խնդրով մթնոլորտին, Ադրբեյջանի ազգահալած հակահայկական քաղաքականությանը և իհարկե նաև ստեղծված նյութական դժվարություններին, այնուամենայնիվ ԼՂԻՄ-ի միակ ուսումնագիտական կրթօջախի անցած ճանապարհը /1974-1988 թթ/ ներառում և արտացոլում է ԼՂԻՄ-ի պատմության բոլոր դրվագները: Անժխտելի փաստ է, որ 1978-1988 թվականները եղել են ինստիտուտի աննախադեպ ձևավորման և զարգացման տարիները, ստեղծվել են նոր ֆակուլտետներ, ամբիոններ, նոր մասնագիտություններ, լաբորատորիաներ, թողարկել բարձրորակ մանկավարժական կադրեր: Եվ չնայած իրար հաջորդող ծանր քաղաքական պայմաններին՝ ինստիտուտի հայ պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողությունը, ողջ արցախահայությունը իր գոյության ամենաօրհասական պահին անգամ չեն կորցրել հոգու արիությունը և մտքի սլացքը: Նա ամեն անգամ առասպելական փյունիկի պես հառնել է մոխրակույտերից, մաքառել իր գոյության, մշակույթի և այդ մշակույթը ժողովրդի մեջ վառ պահող կրթօջախի համար: Ստեղծված այդ դժնդակ տարիներին Ղարաբաղում պահպանվել է ոչ միայն ուսումնագիտական հաստատության /ՍՄԻ/ հայաշունչ ոգին, ազգային դիմագիծը, այլև պահպանվել է մեր նախնիների ստեղծած հոգևոր արժեքները՝ հանուն լուսավոր ապագայի, հանուն ազգային գոյատևման, որին խորապես ու սրբությամբ հավատացել է արցախահայությունը: Առաջնորդվելով ազգային գաղափարախոսության այդ կարգախոսով՝ ինստիտուտի հայ դասախոսական կազմն ուսանողության հետ միասին 1988-ին ոտքի ելավ ազգային-ազատագրական պայքարի՝ հայոց արցախական աշխարհը՝ Հայաստանի անբաժան նահանգը, մայր Հայաստանի հետ վերամիավորելու պահանջով:

Այդ օրերին, ինչպես վկայում են ժամանակակիցները, Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի կոլեկտիվը երկփեղկվեց. ինստիտուտում ադրբեյջանցիների հետ մեկտեղ աշխատանքը դարձավ անհնարին առանձնապես Սումգայիթում տեղի ունեցած ողբերգական իրադարձություններից հետո: ԽՍՀՄ բարձրագույն կրթության նախարար Ելյուտինի հրամանով մեկուկես տասնամյակ գործած մանկավարժական ինստիտուտը 1988 թվականի հոկտեմբերի 26-ին փակվեց: Հայկական բաժինը տեղափոխվեց Վանաձորի Հովի. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտ: 1988 թվականի դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժից հետո Վանաձոր տեղափոխված ՍՄԻ-ի ուսանողների մի մասը վերադարձավ Ստեփանակերտ և սովորել Վանաձորի մանկավարժական ինստիտուտի՝ Ստեփանակերտի նորաբաց բաժանմունքում: Կատարվեց առաջին դժվարին քայլը հայ ժողովրդի, մտավորականների վաղուց նրազած մտահոգումներն իրականացնելու ճանապարհին. պատմական Արցախի կրթական համակարգն ամբողջությամբ ներառվեց Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի մեջ [1]:

Գրականություն

1. Ավանեսյան Ա., ԼՂՊՆ/ԱրՊՆ/. Հայկական երկրորդ պետական համալսարան /1990-1994թթ/, Ստեփանակերտ, 2008:
2. Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականա-կերտման պատմության /1813-2007թթ/, Ստեփանակերտ, 2012:
3. Կադանկատվացի Մ., Պատմություն Ադվանաց աշխարհի, Թիֆլիս, 1913:
4. Հարությունյան Գ., Արցախահայ դպրոցը 5-19-րդ դարերում, Ստեփանակերտ, 2000:
5. Հուրիխանյան Տ., Միջնակարգ մասնագիտական կրթությունը Սովետական Հայաստանում, Երևան, 1969:
6. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994:
7. Ամիջանյան Թ.-ի անձնական արխիվ:

8. ԼՂՀ Պետական արխիվ, Ֆոնդ 30:

9. Հովհաննիսյան Մ.-ի /Արցախի գրող-հրապրակախոս, երկամյա ինստիտուտի շրջանավարտ/ հուշեր:

10. Ստեփանակերտի Մանկավարժական ինստիտուտի արխիվ:

Տեղեկություններ հեղինակի մասին

Արաատ Ավանեսյան – Մ.գ.դ., ֆիզ.մաթ. գիտ. թեկնածու, ԱրՊՀ ընդհանուր և կիրառական ֆիզիկայի ամբիոն

E-mail: arpat.av@mail.ru

Լիլիյա Ասրյան – Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի հայցորդ

E-mail: liliaasryan@yahoo.com

Հոդվածը տպագրության է ներառվում խմբագրական կոլեկիայի անդամ, մ.գ.դ. Գ. Հարությունյանը: